ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» ապրիլի 2025թ. N 47-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովի 2025 թվականի մարտի 31-ի նիստի N 59 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2024 թվականի մարտի 26-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված քաղաքաշինության բնագավառում 2025 թվականի ապրիլի 30-ին և սեպտեմբերի 16-ին նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Քաղաքաշինության բնագավառի օրենսդրություն. շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրման գործընթացի առանձնահատկությունները» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 3 կրեդիտ:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.04.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ